**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ**
**ԴԱՇՏԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

---

24.01.2017թ
N_4_

Արարատի մարզպետ

Պարոն՝ Ռ. Աբրահամյանին

Ձեզ ենք ներկայացնում Դաշտաքար համայնքի 24.01.2017թ ավագանու թիվ 2 նիստի արձանագրությունը:

Համայնքապետ՝ Ն. Մալխասյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
# ԴԱՇՏԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

2017 թ-ի հունվարի 24-ին, ժամը 11-ին, Դաշտաքար համայնքում տեղի ունեցավ ավագանու թիվ 2 նիստը: Նիստին մասնակցում էին ավագանու անդամներ.

Աբրահամ Աբրահամյան
Լյուդվիգ Այնազյան
Արմեն Աթոյան
Արամ Մալխասյան
Անգին Սարգսյան

Համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ՝ Հ. Հակոբյանը
Նիստը նախագահում էր Համայնքի ղեկավար՝ Ն.Մալխասյանը
Նիստը քարտուղարում էր աշխ. քարտուղար՝ Ա. Վարդանյանը

Օրակարգում՝

1. Դաշտաքար համայնքի 2016-2021 թթ զարգացման հնգամյա ծրագրի հաստատման մասին հարցը
2. համայնքապետարանի գույքի տարեկան գույքագրման ցանկի ամփոփման և հաստատման մասին հարցը .
3. Համայնքի 2017թ-ի բյուջեում փոփոխություն կատարելու մասին հարցը.

Լսեցին—Դաշտաքար համայնքի 2016-2021 թթ զարգացման հնգամյա ծրագրի հաստատման մասին հարցը

(զեկուցող՝ Ն. Մալխասյան)

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ կետով ավագանին որոշեց՝*

*ՈՐՈՇՈՒՄ 6*

*Հաստատել Դաշտաքար համայնքի 2016-2021թթ-ի հնգամյա զարգացման ծրագիրը համաձայն հավելված 1-ի:*

Որոշումն անցավ միաձայն.

Աբրահամ Աբրահամյան

Լյուդվիգ Այնազյան

Արմեն Աթոյան

Արամ Մալխասյան

Անգին Սարգսյան

2. Լսեցին --Հ անայնքապետարանի գույքի տարեկան գույքագրման ցանկի ամփոփման և հաստատման մասին հարցը

(զեկ. Ն. Մալխասյան)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց ավագանու անդամներին համայնքապետարանի գույքի ցանկը: Արտահայտվեցին ավագանու անդամներ՝ Լ.Այնազյանը, Ա. Սարգսյանը և Ա.Մալխասյանը:

Լսելով զեկուցողին և արտահայտվողների ելույթը՝

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետի դրույթներով ավագանին որոշեց.

ՈՐՈՇՈՒՄ 7

Հաստատել Դաշտաքարի համայնքապետարանի 2017 թվականի գույքագրման ցանկը համաձայն հավելված 2-ի:

Որոշումն անցավ միաձայն.

Աբրահամ Աբրահամյան

Լյուդվիգ Այնազյան

Արմեն Աթոյան

Արամ Մալխասյան

Անգին Սարգսյան

3. Լսեցին --- Համայնքի 2017թ-ի բյուջեում փոփոխություն կատարելու մասին հարցը.

(զեկ. Ն. Մալխասյան)

*Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի* ՝ ավագանին որոշեց.

ՈՐՈՇՈՒՄ 8

1. Վարչական բյուջեի հանգիստ, մշակույթ, կրոն գործառնական դասակարգման ծրագրի 4239 հոդվածից հատկացնել Հանրակրթական ուսուցում գործառնական դասակարգման ծրագրի 4239 հոդվածին՝ 225 000 ՀՀ դրամ
2. Վարչական բյուջեի հանգիստ, մշակույթ, կրոն գործառնական դասակարգման ծրագրի 4239 հոդվածը սահմանել 575 000 ՀՀ դրամ

Արտահայտվեցին ավագանու անդամներ ՝ Աբրահամ Աբրահամյանը, Լյուդվիգ Այնազյանը և Արամ Մալխասյանը:

Որոշումն անցավ միաձայն.

Աբրահամ Աբրահամյան

Լյուդվիգ Այնազյան

Արմեն Աթոյան

Արամ Մալխասյան

Անգին Սարգսյան

Ավարտելով հաստատված օրակարգի հարցերի քննարկումները՝ համայնքի ղեկավարը հանդես եկավ հայտարարությամբ և նիստը հայտարարեց փակված:

Համայնքի ղեկավար՝ Ն.Մալխասյան

Աշխ. քարտուղար՝ Ա. Վարդանյան